ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 4
Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող
Լոռու մարզային հանձնաժողովի նիստի

03.12.2024թ. ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովի անդամներ, հաշմանդամության հարցերով զբաղվող ՀԿ-ների ներկայացուցիչներ, հրավիրյալներ:

Օ ր ա կ ա ր գ ա ն ա մ՝

1. ՀՀ Լոռու մարզպետ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ Արամ Ղազարյանի ուղերձը Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա առթիվ:

2. 1992թ. ՄԱԿ-ը դեկտեմբերի 3-ը հռչակեց Հաշմանդամների միջազգային օր: 2006թ. դեկտեմբերին Հայաստանը միացավ հաշմանդամների իրավունքների կոնվենցիային: 2008թ. փետրվարին Հայաստանում ստեղծվեց հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովը, իսկ նույն տարվա մարտին՝ մարզային հանձնաժողովները:

/Զեկ.՝ ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյան/

3. Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի կազմում ՀՀ Լոռու մարզը ներկայացնող Հանձնաժողովի անդամ պատվիրակների գործունեության մասին /իրավական գործընթացներ, աշխատանքային հարցեր, ընթացիկ խնդիրներ/

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամ Անուշ Ասլանյան/

4. Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ դիմած անձանց հաշմանդամության սահմանման և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանով հաստատված անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումների գործընթացում առկա խնդիրներին լուծում տալու և ընթացիկ աշխատանքների մասին:

/Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան, Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի տնօրեն, Հանձնաժողովի անդամ Լուսինե Աքմաքչյան/

Այցելություն «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի գրասենյակ

1. Տեղեկատվության հաղորդում «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի 10-ամյա անցած ուղու մասին:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ի նախագահ Անուշ Ասլանյան/

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի հետ աշխատանքային հարաբերությունների տիրույթում իրականացվող «Շարժական սոցիալական կենտրոններ Լոռիում» ծրագրի մասին /«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կազմակերպված արտադպրոցական խմբակների ձևավորում/:

/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ Ծրագրի ղեկավար Աստղիկ Ասրյան-Ղալայան/

«Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ աշխատակազմի կողմից կներկայացվեն Կազմակերպությունում առկա աջակցող միջոցները, դրանք կիրառության ձևերը:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց՝

1. Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանին՝

ա/ Նախապատրաստել գրություն ուղղված Վանաձոր և Սպիտակ համայնքների ղեկավարներին՝ Վանաձորում «Նեցուկ» համայնքային կազմակերպությունում և Սպիտակում՝ Ջերմոցային տնտեսությունում աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց թվաքանակի, նրանց շրջանում կատարված աշխատանքների մասին:

բ/ Նախապատրաստել գրություն ուղղված Միասնական սոցիալական ծառայության պետին՝ տարածքային կենտրոններ դիմած անձանց հաշմանդամության սահմանման և ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 25-ի N 72-Ն հրամանով հաստատված անձի ֆունկցիոնալության գնահատման ուղեգրումների գործընթացում առկա խնդիրներին լուծում տալու և ընթացիկ աշխատանքները համակարգելու համար առաջարկել՝ ՀՀ Լոռու մարզի տարածաշրջաններում /Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր/ Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցչի և էլեկտրոնային առողջապահության «ԱՐՄԵԴ» համակարգի աշխատակցի մասնակցությամբ անցկացնել աշխատանքային խորհրդակցություններ՝ մարզի առողջապահական կազմակերպությունների կողմից էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգ մուտքագրված և մերժված, մերժման պատճառները պարզաբանող և հետագայում դրանց իսպառ վերացնելուն ուղղված աշխատանքների կանոնակարգման վերաբերյալ:

գ/ Հանձնաժողովի նիստի նյութերը նախապատրաստել ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կայք-էջում տեղադրելու համար:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի անդամ Աննա Գասպարյանին՝ ապահովել Հանձնաժողովի նիստի հրապարակայնությունը:

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ԳՈՌ ԱՍՐՅԱՆ